ՈՒՂԵՑՈՒՅՑ

Թափուր պաշտոն զբաղեցնելու համար վարկանիշային ցուցակից ընտրություն կատարելու

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ---------- 3

1. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ ---------- 3
2. ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ---------- 3
3. ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ՑՈՒՑԱԿԻՑ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ---------- 7

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն ուղեցույցը մշակվել է Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից՝ «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հունվարի 31-ի «Վարկանիշային ցուցակները կազմելու համար անցկացվող թեստավորման եվ հարցազրույցի կազմակերպման կարգը սահմանելու մասին» N 73-Ն որոշման և այլ իրավական ակտերի հիման վրա:

Ուղեցույցի նպատակն է աջակցել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության համակարգի մարմիններին մրցույթ անցկացնելու մասին հայտարարություն հրապարակելու, վարկանիշային ցուցակից ընտրություն կատարելու գործընթացներում:

1. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սույն ուղեցույցում օգտագործվում է հետևյալ հիմնական հասկացությունը՝

1. **Վարկանիշային ցուցակ՝** քաղաքացիական ծառայության մասնագիտական պաշտոնների 6-րդ, 7-րդ և 8-րդ ենթախմբերի թափուր պաշտոնների հավակնորդների ցուցակ:

2. ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Քաղաքացիական ծառայության մասնագիտական պաշտոնների 6-րդ, 7-րդ և 8-րդ ենթախմբերի թափուր պաշտոն առաջանալու պահից երեք ամսվա ընթացքում համապատասխան մարմինը իր պաշտոնական կայքէջում, քաղաքացիական ծառայության գրասենյակի պաշտոնական կայքէջում, Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքէջում՝ www.azdarar.am, և քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում հրապարակում է հայտարարություն քաղաքացիական ծառայության

մասնագիտական պաշտոնների 6-րդ, 7-րդ և 8-րդ ենթախմբերի թափուր պաշտոնը համալրելու համար մրցույթ անցկացնելու մասին:

Հայտարարությունը ներառում է առնվազն հետևյալ տեղեկատվությունը՝

- *համապատասխան մարմնի անվանումը.*
- *քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնի անվանումը, ծածկագիրը և տվյալ պաշտոնի անձնագրի էլեկտրոնային համապատասխան հղումը.*
- *այն փաստաթղթերի ցանկը, որոնք հարցազրույցին հրավիրվող անձը պետք է ներկայացնի հարցազրույցի օրը.*
- *հարցազրույցի անցկացման ձևաչափերը.*
- *հիմնական աշխատավարձի չափը.*
- *տվյալ պաշտոնում աշխատելու համար պահանջվող անձնային որակները.*
- *աշխատավայրի հասցեն.*
- *համապատասխան մարմնի անձնակազմի կառավարման ստորաբաժանման կոնտակտային տվյալները (հասցեն, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն).*
- *հարցազրույցի հրավիրելու համար վարկանիշային ցուցակում գրանցված անձանց տեղեկացնելու վերջնաժամկետի օրը, որը պետք է լինի հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը.*
- *հարցազրույցն անցկացնելու օրը, ժամը և վայրը, որը պետք է լինի հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող վեցերորդ աշխատանքային օրը:*

Հայտարարության օրինակը ներկայացված է ստորև (Օրինակ 1):

Օրինակ 1

Հայտարարություն

մասնագիտական պաշտոնների 6-րդ ենթախմբի թափուր պաշտոնը համալրելու համար մրցույթ հայտարարելու մասին

ՀՀ առողջապահության նախարարությունը հայտարարում է մրցույթ ներքին աուդիտի բաժնի աուդիտորի թափուր պաշտոնը համալրելու համար (ծածկագիր՝ 11-32.5-Մ6-1) և վարկանիշային ցուցակի համապատասխան համարներում գրանցված անձանց հրավիրում է հարցազրույցի, որը տեղի կունենա 2019 թվականի ապրիլի 9-ին, ժամը 11.^{00}-ին ՀՀ առողջապահության նախարարության վարչական շենքում (ք.Երևան, Կենտրոն վարչական շրջան, Կառավարական շենք N3):

Հարցազրույցին հրավիրվող անձը հարցազրույցի օրը պետք է ներկայացնի հետևյալ բնօրինակ փաստաթղթերը՝

1) *անձնագիր (ՀԾ համարանիշ).*
2) *դիպլոմ (առկայության դեպքում).*
3) *աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթուղթ (առկայության դեպքում).*
4) *արական սեռի անձինք՝ զինվորական գրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասից զինվորական կցագրման վկայական կամ համապատասխան տեղեկանք:*

Հարցազրույցը կանցկացվի «Հարցարան» ձևաչափով:

Հիմնական աշխատավարձի չափը կազմում է՝ 111.115 ՀՀ դրամ:

Նշված պաշտոնին հավակնող անձը պետք է լինի բարեկիրթ, պարտաճանաչ, հավասարակշռված, ունենա նախաձեռնողականություն և պատասխանատվություն ստանձնելու կարողություն:

Քաղաքացիական ծառայության նշված թափուր պաշտոնի անձնագրի էլեկտրոնային տարբերակին կարող եք ծանոթանալ www.moh.am էլեկտրոնային հասցեով:

Աշխատավայրի հասցեն է՝ ք.Երևան, Կենտրոն վարչական շրջան, Կառավարական շենք N3:

Վարկանիշային ցուցակում գրանցված անձանց հարցազրույցի հրավիրելու համար տեղեկացնելու վերջնաժամկետի օրն է 2019 թվականի ապրիլի 4-ը:

Անհրաժեշտ տեղեկությունների համար կարող եք զանգահարել 010-21-00-00 հեռախոսահամարով կամ ուղարկել հաղորդագրություն www.moh.am էլեկտրոնային փոստի հասցեին:

1 ապրիլի 2019թ.

Հարցազրույցի հրավիրելու համար վարկանիշային ցուցակում գրանցված անձանց տեղեկացնելու վերջնաժամկետի օրը պետք է լինի հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը (Օրինակ 2):

Օրինակ 2

Եթե հայտարարությունը հրապարակվել է 2019 թվականի ապրիլի 1-ին (երկուշաբթի օրը), ապա վարկանիշային ցուցակում գրանցված անձանց տեղեկացնելու վերջնաժամկետի օրը կլինի 2019 թվականի ապրիլի 4-ը (հինգշաբթի օրը):

Հարցազրույցն անցկացնելու օրը պետք է լինի հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող վեցերորդ աշխատանքային օրը (Օրինակ 3):

Օրինակ 3

Եթե հայտարարությունը հրապարակվել է 2019 թվականի ապրիլի 1-ին (երկուշաբթի օրը), ապա հարցազրույցն անցկացնելու օրը կլինի 2019 թվականի ապրիլի 9-ը (հաջորդող շաբաթվա հինգշաբթի օրը):

Հայտարարության հրապարակման օրը համապատասխան մարմինը հայտարարված թափուր պաշտոնի մասին անհրաժեշտ տեղեկատվությունը մուտքագրում է քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակ: Տվյալների մուտքագրումից անմիջապես հետո համապատասխան մարմնին

ինքնաշխատ եղանակով տրվում է հնարավորություն մուտք գործելու վարկանիշային ցուցակ և կատարելու վարկանիշային ցուցակից թեկնածուների ընտրություն:

ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ՑՈՒՑԱԿԻՑ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Վարկանիշային ցուցակում թեստավորումը հաղթահարած թեկնածուները գրանցվում են ըստ հավաքած միավորների՝ առավելագույն միավորից մինչև նվազագույն միավոր:

Վարկանիշային ցուցակի օրինակը ներկայացված է ստորև (Աղյուսակ 1):

ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ՑՈՒՑԱԿ

Հ/Հ	անունը, հայրանունը, ազգանունը	թեստավորման արդյունքում ստացած միավորը	կրթությունը			աշխատանքային ստաժը		օտար լեզուների իմացությունը		համակարգչային ծրագրերի իմացությունը	նախընտրելի աշխատավայրը (մարմինը)	նախընտրելի վարչատարածքային միավորը (մարզը)	վարկանիշային ցուցակում գրանցվելու օրը, ամիսը տարին	հեռախոսահամարը	էլեկտրոնային փոստի հասցեն	թեստավորմանը մասնակցելու համար քաղաքացու ներկայացրած փաստաթղթերի հղումը	այլ
			ուսումնական հաստատության անվանումը	մասնագիտությունը	որակավորումը	մասնագիտական ստաժ (տարի)	հանրային ծառայության ստաժ	օտար լեզուն	տիրապետման մակարդակը								
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
1	Գևորգ Արամի Գևորգյան	50	ԵՊՀ	իրավագիտություն	իրավագետի մագիստրոսի աստիճան	3	0	1.անգլերեն, 2.ռուսերեն	1.կարդում է և կարող է բացատրվել 2.ազատ	Windows,word, excel, power point	Արդարադատության նախարարություն	Երևան	19.08.2019	000-000-000	G.Gevorgyan@gmail.com	www.aaaaaa.am	
2	Արսեն Գագիկի Արսենյան	49.25	ՀՊՏՀ	Տնտեսագիտություն	տնտեսագետ	0	1	1.անգլերեն, 2.ռուսերեն	1.կարդում է և կարող է բացատրվել 2.ազատ	Windows,word, excel	Տավուշի մարզպետարան	Տավուշի մարզ	20.09.2019	000-000-000	Arsenyan11@gmail.com	www.nnnnn.am	տ.գ.թ.
3	Արմինե Հովսեփի Պետրոսյան	49	ԵՊԼՀ	Լեզվաբանություն	լեզվաբանի մագիստրոսի աստիճան	0	0	1.անգլերեն, 2.ռուսերեն, 3.իսպաներեն	1.ազատ 2.ազատ 3. ազատ	Windows,word, excel, power point	Զբոսաշրջության պետական կոմիտե	Երևան	15.06.2019	000-000-000	ARMINE.PET.5@mail.ru	www.tttt11111.am	
	Թորոս Արթուրի Թորոսյան	49	ԵՊՀ	Հոգեբանություն	Հոգեբանի բակալավրի աստիճան	2	0	1.անգլերեն, 2.ռուսերեն	1.կարդում է և կարող է բացատրվել 2.ազատ	MS office	Սյունիքի մարզպետարան	Սյունիք	14.08.2019	000-000-000	toros.555@gmail.com	www.555tttt.am	
	Թերեզա Սիսակի Գրիգորյան	49	ՀՊՏՀ	Հաշվապահություն	Հաշվապահի մագիստրոսի աստիճան	0	0	1.անգլերեն, 2.ռուսերեն	1.ազատ 2.ազատ	Windows,word, excel	Ցանկացած նախարարություն	Երևան	25.10.2019	000 000 000	www.tereza.grig@yahoo.com	www.terezaaaa.am	
4	Տիգրան Արտակի Տիգրանյան	48.75	ՀԱԱՀ	Տնտեսագիտություն	տնտեսագետի բակալավրի աստիճան	0	1	ռուսերեն	ազատ	Windows,word, excel,power point	Գյուղատնտեսության նախարարություն	Երևան	14.02.2019	000-000-00	TigrantanT@mail.ru	www.tttttttt.am	արիության մեդալ
5	Հակոբ Պետրոսի Հակոբյան	48.25	ՇՊՀ	հոգեբանություն	հոգեբանի մագիստրոսի աստիճան	1	0	ռուսերեն	ազատ	Windows,word, excel, power point	Համակարգի ցնկացած մարմին	Երևան, Շիրակի մարզ	19.08.2019	000-000-000	Hakob111@gmail.com	www.hhh111.am	
	Միքայել Մելիքի Միքայելյան	48.25	ՀՊՄՀ	իրավագիտություն	իրավագետի բակալավրի աստիճան	3	0	1.անգլերեն, 2.ռուսերեն	1.կարդում է և կարող է բացատրվել 2.ազատ	MS office	Ցանկացած նախարարություն	Երևան	20.09.2019	000-000-000	MMM777@mail.ru	www.mmm77.am	
6	Ասատուր Ավետիքի Ասատրյան	47.25	ՃՇՀԱՀ	ճարտարագիտություն	ճարտարագիտության մագիստրոս	1	1	1.անգլերեն, 2.ռուսերեն	1.ազատ 2.ազատ	Windows,word, excel	Համակարգի ցանկացած մարմին	Երևան	15.06.2019	000-000-000	AvetAs@gmail.com	www.aaavvv.am	
7	Գաբրիել Հայկի Գաբրիելյան	47	ՃՇՀԱՀ	դիզայներ	դիզայնի բակալավր	2	0	1.անգլերեն, 2.ռուսերեն 3.ֆրանսերեն	1.ազատ 2.ազատ 3. ազատ	Windows,word, excel, power point	Ցանկացած նախարարություն	Երևան	14.02.2019	000-000-000	GabrielTig@mail.ru	www.ggg11.am	
8	Տիգրանուհի Գագիկի Տիգրանյան	46.75	ՎՊՀ	Լրագրություն	լրագրող	0	1	1.անգլերեն, 2.ռուսերեն	1.կարդում է և կարող է բացատրվել 2.ազատ	Windows,word, excel	Լոռու մարզպետարան	Լոռու մարզ	17.06.2019	000-000-000	Tigranyan22@mail.ru	www.ttgggtt.am	

9	Արմինե Արմենի Արմենակյան	46.25	ՀՊՏՀ	Տնտեսագիտություն	տնտեսագետի բակալավրի աստիճան	–	–	–	–	–	–	–	–	–	–	–	–
10	Գոռ Արսենի Գրիգորյան	46	ՃՇՀԱՀ	ճարտարագի-տություն	ճարտարագիտութ-յան բակալավր	–	–	–	–	–	–	–	–	–	–	–	–
11	Կարեն Սերոբի Ավետիսյան	45.75	ԵՊԲՀ	Բուժական գործ	Մանկաբուժություն	–	–	–	–	–	–	–	–	–	–	–	–
12	Սերինե Արթուրի Գաբրիելյան	45	ՀԱԱՀ	Ստոմատոլոգիա	Ստոմատոլոգ	–	–	–	–	–	–	–	–	–	–	–	–
13	Արտակ Աբելի Վարդանյան	44.25	ԵՊՀ	Միջազգային հարաբերություններ	Քաղաքագիտութ-յան բակալավր	–	–	–	–	–	–	–	–	–	–	–	–
14	Լիլիթ Սասունի Սիրադեղյան	44	ՀՊՏՀ	Տնտեսագիտություն	Հանրային ֆինանսների մագիստրոս	–	–	–	–	–	–	–	–	–	–	–	–
15	Աիդա Արմանի Ղազինյան	43.75	ԵՊԼՀ	մանկավարժություն	մանկավարժութ-յան մագիստրոս	–	–	–	–	–	–	–	–	–	–	–	–
16	Զավեն Գրիգորի Ղազարյան	43	ՇՊՀ	մանկավարժություն	կենսաբանության մագիստրոս	–	–	–	–	–	–	–	–	–	–	–	–
17	Վարդգես Գոռի Ասատրյան	42	ԵՊԲՀ	Բուժական գործ	Համաճարակաբա-նության ամագիստրոս	–	–	–	–	–	–	–	–	–	–	–	–
18	Աննա Արմենի Աթոյան	41.25	ՀՊՏՀ	Տնտեսագիտություն	Հաշվապահի բակալավրի աստիճան	–	–	–	–	–	–	–	–	–	–	–	–
19	Վիգեն Հայկի Սուքիասյան	40.25	ԵՊՀ	Պատմություն	Հայոց պատմության մագիստրոս	–	–	–	–	–	–	–	–	–	–	–	–
20	Լիանա Կարենի Առաքելյան	40	ՎՊՀ	Հոգեբանություն	Հոգեբանի մագիստրոսի աստիճան	–	–	–	–	–	–	–	–	–	–	–	–

Միևնույն արդյունք հավաքած թեկնածուները վարկանիշային ցուցակում գրանցվում են նույն համարի տակ (Օրինակ 4):

Օրինակ 4

Համաձայն Աղյուսակ 1-ում ներկայացված տվյալների՝

- *Արմինե Հովսեփի Պետրոսյանը, Թորոս Արթուրի Թորոսյանը և Թերեզա Սիսակի Գրիգորյանը թեստավորման արդյունքում հավաքել են 49 միավոր և վարկանիշային ցուցակում գրանցվել են նույն՝ 3-րդ համարի տակ:*
- *Հակոբ Պետրոսի Հակոբյանը և Միքայել Մելիքի Միքայելյանը թեստավորման արդյունքում հավաքել են 48.25 միավոր և վարկանիշային ցուցակում գրանցվել են նույն՝ 5-րդ համարի տակ:*

(տես՝ Աղյուսակ 1-ի 3-րդ և 5-րդ համարներ)

Համապատասխան մարմինն ընտրում է վարկանիշային ցուցակի 1-5-րդ համարներում գրանցված անձանց և հրավիրում հարցազրույցի (Օրինակ 5):

Օրինակ 5

Համաձայն Աղյուսակ 1-ում ներկայացված տվյալների մրցույթ անցկացնող համապատասխան մարմինը հարցազրույցի կհրավիրի հետևյալ անձանց՝

ՀՀ	անունը, հայրանունը, ազգանունը	թեստավորման արդյունքում ստացած միավորը
1	**2**	**3**
1	*Գևորգ Արամի Գևորգյան*	*50*
2	*Արսեն Գագիկի Արսենյան*	*49.25*
3	*Արմինե Հովսեփի Պետրոսյան*	*49*
	Թորոս Արթուրի Թորոսյան	*49*
	Թերեզա Սիսակի Գրիգորյան	*49*
4	*Տիգրան Արտակի Տիգրանյան*	*48.75*
5	*Հակոբ Պետրոսի Հակոբյան*	*48.25*
	Միքայել Մելիքի Միքայելյան	*48.25*

Համապատասխան մարմինը վարկանիշային ցուցակից ընտրված թեկնածուներին նույն օրը տեղեկացնում է ընտրվելու և հարցազրույցի հրավիրվելու մասին՝ հեռախոսազանգի և թեկնածուների էլեկտրոնային փոստի հասցեներին ծանուցում ուղարկելու միջոցով (Օրինակ 6):

Օրինակ 6

Ծանուցում

հարցազրույցի հրավիրելու վերաբերյալ

Հարգելի Թորոս Թորոսյան

ՀՀ առողջապահության նախարարությունը՝ ի դեմս գլխավոր քարտուղար Արամ Արամյանի, հրավիրում է Ձեզ մասնակցելու ներքին աուդիտի բաժնի աուդիտորի թափուր պաշտոնը համալրելու համար (ծածկագիր՝ 11-32.5-Մ6-1) անցկացվող մրցույթի հարցազրույցի փուլին, որը տեղի կունենա 2019 թվականի ապրիլի 9-ին, ժամը 11.^{00}- ՀՀ առողջապահության նախարարության վարչական շենքում (ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Կառավարական շենք N 3):

Քաղաքացիական ծառայության նշված թափուր պաշտոնի վերաբերյալ հայտարարությանը կարող եք ծանոթանալ մեր պաշտոնական կայքէջում՝ www.moh.am և քաղաքացիական ծառայության գրասենյակի պաշտոնական կայքէջում՝ www.cso.gov.am:

Հարցազրույցին Ձեր մասնակցությունը հաստատելու կամ մասնակցելուց հրաժարվելու վերջնաժամկետը Ձեր էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկված ծանուցման պահից հաշվարկված 24-րդ ժամն է:

Խնդրում ենք մինչև նշված ժամկետի ավարտը www.moh.am էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկել հաղորդագրություն հարցազրույցին Ձեր մասնակցությունը հաստատելու կամ մասնակցելուց հրաժարվելու վերաբերյալ:

Նշված ժամկետի ավարտից հետո Ձեր կողմից ուղարկված ծանուցումը իրավական հիմք չի ունենա:

Ծանուցող՝ ՀՀ առողջապահության նախարարություն:

2 ապրիլի 2019 թ.

Հարցազրույցին թեկնածուի մասնակցության հաստատման վերջնաժամկետը թեկնածուի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկված ծանուցման պահից հաշվարկվող 24-րդ ժամն է (Օրինակ 7):

Օրինակ 7

Եթե հարցազրույցի հրավիրվող թեկնածուի էլեկտրոնային փոստի հասցեին ծանուցումն ուղարկվել է ապրիլի 3-ին՝ ժամը 15.35-ին, ապա հարցազրույցի հրավիրվող թեկնածուն իր մասնակցությունը կամ մասնակցելուց հրաժարվելը կարող է հաստատել մինչև ապրիլի 4-ի ժամը 15.35-ը:

Հարցազրույցն անցկացվում է, եթե հարցազրույցին մասնակցելը հաստատել է անգամ մեկ թեկնածու:

Եթե հարցազրույցին մասնակցությունը ոչ ոք չի հաստատում կամ մասնակցությունը հաստատած թեկնածուներից ոչ ոք չի ներկայանում հարցազրույցին, ապա հարցազրույցը համարվում է չկայացած, և հարցազրույցի անցկացման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում տրվում է նոր հայտարարություն (Օրինակ 8):

Օրինակ 8

Եթե հարցազրույցի անցկացման օր է նշանակվել 2019 թվականի ապրիլի 9-ը, սակայն հարցազրույցը չի կայացել, ապա մրցույթ անցկացնելու վերաբերյալ նոր հայտարարությունը կհրապարակվի հարցազրույցի անցկացման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում, տվյալ դեպքում՝ մինչև 2019 թվականի ապրիլի 16-ը ներառյալ:

Հարցազրույցի հրավիրելու մասին նոր հայտարարություն տալուց հետո տվյալ պաշտոնի համար նախկինում հարցազրույցի հրավիրված թեկնածուները հարցազրույցի չեն հրավիրվում, տվյալ դեպքում՝ Օրինակ 5–ում ներկայացված թեկնածուները հարցազրույցի չեն հրավիրվում:

Նոր հայտարարության հրապարակման դեպքում համապատասխան մարմինը տվյալ պաշտոնի համար հարցազրույցի է հրավիրում վարկանիշային ցուցակում ըստ հերթականության հաջորդող հինգ համարներում գրանցված անձանց (Օրինակ 9):

Օրինակ 9

Համաձայն Աղյուսակ 1-ում ներկայացված տվյալների մրցույթ անցկացնող համապատասխան մարմինը հարցազրույցի կհրավիրի վարկանիշային ցուցակի 6-10-րդ համարներում գրանցված հետևյալ անձանց՝

ՀՀ	անունը, հայրանունը, ազգանունը	թեստավորման արդյունքում ստացած միավորը
1	**2**	**3**
6	*Ասատուր Ավետիքի Ասատրյան*	*47.25*
7	*Գաբրիել Հայկի Գաբրիելյան*	*47*
8	*Տիգրանուհի Գագիկի Տիգրանյան*	*46.75*
9	*Արմինե Արմենի Արմենակյան*	*46.25*
10	*Գոռ Արսենի Գրիգորյան*	*46*

Եթե հարցազրույցին մասնակցությունը կրկին ոչ ոք չի հաստատում կամ մասնակցությունը հաստատած թեկնածուներից ոչ ոք չի ներկայանում հարցազրույցին, ապա համապատասխան մարմինը, վերը ներկայացված ընթացակարգի համաձայն, հարցազրույցի հրավիրելու վերաբերյալ նոր հայտարարություն է տալիս այնքան ժամանակ, մինչև վարկանիշային ցուցակի միմյանց հաջորդող վերջին հինգ համարներում գրանցված թեկնածուներին ընտրելը և հարցազրույցի հրավիրելը:

Եթե քաղաքացիական ծառայության տվյալ թափուր պաշտոնի անձնագրով նախատեսված է մասնագիտական բարձրագույն կրթության պահանջ, և վարկանիշային ցուցակի 1-5-րդ համարներում չկա համապատասխան մասնագիտություն ունեցող հինգ թեկնածու, ապա համապատասխան մարմինը վարկանիշային ցուցակի զտիչների օգնությամբ կատարում է ընտրություն և հարցազրույցի է հրավիրում տվյալ մասնագիտություն ունեցող առաջին հինգ թեկնածուին (Օրինակ 10):

Օրինակ 10

Եթե քաղաքացիական ծառայության տվյալ թափուր պաշտոնի անձնագրով նախատեսված է «տնտեսագիտություն» մասնագիտությամբ բարձրագույն կրթության պահանջ, ապա աղյուսակ 1-ում ներկայացված տվյալների համաձայն, համապատասխան մարմինը հարցազրույցի կհրավիրի վարկանիշային ցուցակի 2-րդ, 4-րդ, 9-րդ, 14-րդ և 18-րդ համարներում գրանցված և «տնտեսագիտություն» մասնագիտությամբ բարձրագույն կրթություն ունեցող հետևյալ անձանց՝

հհ	անունը, հայրանունը, ազգանունը	թեստավորման արդյունքում ստացած միավորը	մասնագիտությունը
1	**2**	**3**	**5**
2	*Արսեն Գագիկի Արսենյան*	*47.25*	*տնտեսագիտություն*
4	*Տիգրան Արտակի Տիգրանյան*	*47*	*տնտեսագիտություն*
9	*Արմինե Արմենի Արմենակյան*	*46.75*	*տնտեսագիտություն*
14	*Լիլիթ Սասունի Սիրադեղյան*	*46.25*	*տնտեսագիտություն*
18	*Աննա Արմենի Ասոյան*	*46*	*տնտեսագիտություն*

Եթե քաղաքացիական ծառայության տվյալ թափուր պաշտոնի անձնագրով նախատեսված է մասնագիտական բարձրագույն կրթության պահանջ, և վարկանիշային ցուցակում կա տվյալ մասնագիտությամբ թեկուզ մեկ թեկնածու, ապա համապատասխան մարմինը տվյալ թեկնածուին հրավիրում է հարցազրույցի՝ անկախ հավաքած միավորներից (Օրինակ 11):

Օրինակ 11

Եթե քաղաքացիական ծառայության տվյալ թափուր պաշտոնի անձնագրով նախատեսված է «լրագրություն» մասնագիտությամբ բարձրագույն կրթության պահանջ, ապա աղյուսակ 1-ում ներկայացված տվյալների համաձայն համապատասխան մարմինը հարցազրույցի կհրավիրի վարկանիշային ցուցակի 8-րդ համարում գրանցված և «լրագրություն» մասնագիտությամբ բարձրագույն կրթության ունեցող անձին՝

ՀՀ	անունը, հայրանունը, ազգանունը	թեստավորման արդյունքում ստացած միավորը	մասնագիտությունը
1	**2**	**3**	**5**
8	*Տիգրանուհի Գագիկի Տիգրանյան*	*46.75*	*լրագրություն*

Եթե հարցազրույցը համարվում է չկայացած, ապա նոր հայտարարության հրապարակման դեպքում համապատասխան մարմինը տվյալ պաշտոնի համար հարցազրույցի է հրավիրում վարկանիշային ցուցակում պահանջվող մասնագիտություն ունեցող հաջորդող հինգ թեկնածուին՝ մինչև վարկանիշային ցուցակում համապատասխան մասնագիտություն ունեցող վերջին թեկնածուին ընտրելը և հարցազրույցի հրավիրելը:

Քաղաքացիական ծառայության մասնագիտական պաշտոնների 6-րդ, 7-րդ և 8-րդ ենթախմբերի թափուր պաշտոններն զբաղեցնելու համար հարցազրույցն անցկացվում է ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեբերի 27-ի «Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին» N 1554-Ն որոշմամբ սահմանված կարգով: